Ամէն դէպքում

Մարդիկ յաճախ անխոհեմ են, անտրամաբանական եւ ինքնահաւան:

... Ներէք նրանց բոլոր դէպքերում:

Եթէ դուք սիրալիր էք, մարդիկ կարող են ձեզ մեղադրել անձնապաշտական, ծածուկ շարժառիթների համար:

... Ամէն դէպքում սիրալիր եղէք:

Եթէ դուք յաջողակ էք, ապա դուք ձեռք կը բերէք բազում կեղծ ընկերներ եւ նոյնքան իսկական թշնամիներ:

...Ամէն դէպքում ձգտէք յաջողութեան:

Եթէ դուք ազնիւ էք եւ անկեղծ, ապա մարդիկ կարող են ձեզ խաբել:

... Ամէն դէպքում եղէք ազնիւ եւ անկեղծ:

Բարձրագոյն գաղափարներով մեծագոյն մարդիկ եւ տիկնայք կարող են գնդակահարուել փոքրագոյն մտքի տէր փոքրագոյն մարդկանց կամ կանանց կողմից:

...Ամէն դէպքում մտածէք բարձր բաներից:

Մարդիկ լաւ են վերաբերւում ձախողուածներին, բայց հետեւում են միայն յաջողակներին:

... Ամէն դէպքում պայքարէք ձախողակներից ոմանց համար:

Այն, ինչը դուք կը կառուցէք տարիներ շարունակ, ինչ որ մէկը կարող է ոչնչացնել մէկ օրում:

... Ամէն դէպքում կառուցե՛ք:

Եթէ դուք խաղաղութեան եւ երջանկութեան էք հասնում, դրանք կարող են նախանձելի լինել:

... Ամէն դէպքում եղէք երջանիկ:

Այն բարի գործը, որը դուք այսօր կը կատարէք, մարդիկ վաղը կը մոռանան:

... Ամէն դէպքում բարին գործէք:

Աշխարհին տուէք ձեր ունեցածի լաւագոյն մասը, եւ հնարաւոր է« որ դա բաւարար չի լինի:

... Ամէն դէպքում աշխարհին տուէք ձեր ունեցածի լաւագոյն մասը:

Վերջին հաշւով դուք հասկանում էք, որ այս ամէնը ձեր եւ Աստծո միջեւ է:

Եւ յամենայն դէպս ոչ ձեր եւ մարդկանց միջեւ:

Մայր Թերեզա

(Սոյն պօէմը, որ փորագրուած է Կալկաթայի իր մանկատան պատին, չի ներառում շեղատառերով գրուած մասերը, որոնք Քէյթ Քէնթի կողմից 1968 թուականին գրուած «Արտասովոր պատուիրանների» բնագրի մասն են:)

CG 016